ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

01.01.2019-31.12.2019

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հաշվետու ժամանակաշրջանում, ճիշտ գնահատելով համայնքի իրավիճակը, առավել ուշադրություն եմ դարձրել համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների, բյուջեիսեփական եկամուտների մուտքերի, բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառներին:
Համայնքի բյուջեի կազմումը, որպես համայնքի զարգացմանհիմք՝ լուրջ ուշադրություն եմ դարձրել եկամտային մուտքերի /գույքահարկի, հողի հարկի, հողի վարձավճարի, տեղականտուրքերի և վճարների/ հավաքագրման խնդիրների կատարման վրա: Ընդ որում , ղեկավարվել եմ եկամտային մուտքերի եռամսյակային, կիսամյակային և տարեկանհամամասնությունները պահպանելու սկզբունքով:
Հիմք ընդունելով, որ բյուջեի մուտքերի հավաքագրումըկախված է բյուջետային գործընթացի ճիշտ կազմակերպումից՝ ուղերձով դիմել եմ ազգաբնակչությանը: Միաժամանակկազմվել է համայնքի բնակիչների հարկերի հավաքագրման և ապառքների գանձման ժամանակացույց: Հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ներքոհիշյալթվային ցուցանիշները բնութագրում և փաստում են իմ և կոլեկտիվի համագործակցության ու համատեղաշխատանքի արդյունքները:
Ընդամենը համայնքի 2019թ. բյուջեի եկամուտները նախատեսվել է 11352.6 հազ.դրամ, փաստացի կատարվել է՝ 11256.6 հազ. դրամ, կատարվել է՝
99.2 տոկոսով:
Սեփական եկամուտների գծով՝ 3651.0 հազ. դրամ, կատարվելէ 3555.0 հազ. դրամ՝ 97.4տոկոսով:
Հողի հարկ՝ 1250.0 հազ. դրամ, կատարվել է 1268.3 հազ.դրամ՝ 101.5 տոկոսով:
Գույքահարկ՝ 1190.0 հազ. դրամ, կատարվել է 1103.3 հազ.դրամ՝ 92.7 տոկոսով:
Հողի վարձավճար՝ 844.0 հազ. դրամ, կատարվել է 843.2հազ. դրամ՝ 99.9 տոկոսով:
Տեղական տուրքեր՝ 50.0 հազ. դրամ, կատարվել է 53.0 հազ.դրամ՝ 106 տոկոսով:
Աղբահանութ. վճարներ՝ 209.0 հազ.դ, կատարվել է 65.3 հազ.դ. 31.2%
Տեղական վճարներ՝ 115.1 հազ. դրամ
Այլ եկամուտներ՝ նախատեսվ. 108.0 հազ.դրամ, կատարվել է 106.8 հազ.դրամ, 98.9 %
Որպես համայնքի ղեկավար, լինելով բյուջեի տնօրինման և վերահսկման պատասխանատու բյուջեի ծախսային մասը հաշվետու ժամանակաշրջանում նպատակաուղղել եմ հետևյալ խնդիրների լուծմանը՝

1.Աշխատավարձ՝.....	7658.7	հազ. դրամ
2.Աղբահանություն	96.2	հազ. դրամ
3.Բանկային ծառայություններ՝.....	10.2	հազ. դրամ
4.Կապի ծառայություն՝.....	130.7	հազ. դրամ
5.Էներգետիկ ծառայություն՝.....	873.9	հազ. դրամ
6.Տեղեկատվական ծառայություններ ՝.....	33.0	հազ.դրամ
7. Կառավարչական ծառայություններ՝.....	60.0	հազ.դրամ
8.Համակարգչային ծառայություն՝.....	14.4	հազ.դրամ
9.Մասնագիտական ծառայություն՝.....	49.1	հազ.դրամ
10.Գրասենյայային նյութեր՝.....	169.0	հազ.դրամ
11.Տրանսպորտային նյութեր՝..... ..	738.6	հազ.դրամ
12.Հուղարկավորության նպաստ՝.....	150.0	հազ.դրամ
13.Անդամավճարներ՝..... ..	61.0	հազ.դրամ
14.Հարկեր և տուրքեր՝.....	17.2	հազ.դրամ
15.Շենք շինությունների ընթացիկ նորոգում.՝.....	305.3	հազ.դրամ
16. Մեքենաների և կառույցների նորոգում.....	537.4	հազ.դրամ
17.Հանրային սննդի նյութեր.....	60.0	հազ.դրամ
18.Հատուկ նպատակային նյութեր..... ...	100.8	հազ.դր
19. Դրամական օգնություն.....	10.0	հազ.դրամ

Ընդամենը՝ ..... 11169.4 հազ.դրամ:

Լուրջ ուշադրություն եմ դարձրել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններից՝ կոմունալ ծառայության բնագավառի խնդիրների լուծմանը: Համայնքի տարածքում կազմակերպվել է սանմաքրման և աղբահանման աշխատանքներ:
Կատարվել է բնակավայրի բարեկարգման, ճանապարհների պահպանության և շահագործման աշխատանքներ՝ կատարվել է ճանապարհների և փողոցների փոսերի լցնում ավազով և խճաքարերով, ասֆալտապատում և հարթեցում:
Սեպտեմբերի 1-ից համայնքում գործում է նախակրթարան, որտեղ հաճախում են 16 երեխաներ: Նախակրթարանի հիմնումը մեր համայնքի համար եղել է կարևորագույն նպատակներից մեկը, որը նախատեսված էր համայնքի զարգացման ծրագրով: Այդ նպատակը կյանքի կոչվեց ՀՀ Կառավարության կողմից իրականացված ծրագրի արդյունքում, որով մեր համայնքը ընդգրկվեց թիրախային համայնքների շարքում, քնի որ մենք չունեինք համաֆինանսավորման հնարավորությու
Տնտեսական հարաբերություններից հատկապես ուշադրություն եմ դարձրել անասնաբուժական ծառայությանը՝համայնքի անասնաբուժական ծառայությունից խստորեն պահանջելով կատարել հակահամաճարակային միջոցառումներ, նախապես կանխելով անասունների մոտ հիվանդությունների առաջացումը, դրսից անասունների մուտքը համայնքի տարածք:
Աշխատանքի սոցիալական ծառայության բնագավառում.
կատարվել է համայնքի ընտանիքների ուսումնասիրություններ, ևսոցիալ-տնտեսապես անապահով կաթիքավոր 15 ընտանիքները ընդգրկվել են «ՓԱՐՈՍ» համակարգ:
Օգտագործելով համապատասխան հնարավորություններ համայնքի բնակչության մոտ 80 տոկոսը ներգրավվել են գարնանային գյուղատնտեսական, սեզոնային աշխատանքներում:
Որպես պարտադիր լիազորություն հողօգտագործման բնագավառում իրականացրել եմ վերահսկման աշխատանքներ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման վերաբերյալ՝ հողօգտագործողներից պահանջելով պահպանել հողային օրենսդրության պահանջները:
Հասարակական կարգի պահպանությունը համայնքում լավ հիմքերի վրա է դրված:
Իրավախախտումները հազվադեպ են տեղի ունենում ի շնորհիվ համայնք-ոստիկանություն մշտական համագործակցության և այդ ուղղությամբ տարվող այլ աշխատանքների:
Քաղաքաշինական բնագավառում սահմանված կարգով վարել եմ քաղաքաշինական աշխատանքները: Համայնքի տարածքում կանխվել և կասեցվել է ինքնակամ շինարարությունները առկայության դեպքում կայացվել են համապատասխան օրինականացման որոշումներ:
Աստիճանաբար լուծվում են համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրները:
Համայնքի բնակչությունը ապահոված է գազով և շուրջօրյա ջրամատակարարմամբ, բնակավայրի ողջ տարածքում առկա է գիշերային լուսավորության ցանց:
Ցավով պետք է նշեմ, որ համայնքի բյուջեի հնարավորություններով թույլ չեն տալիս լուծել ն շատ խնդիրներ:
Հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել է համայնքի ավագանու 5 հերթական նիստեր, որոնց ընթացքում քննարկվել և հաստատվել է համայնքի ղեկավարի և աշխատակազմի դրույքաչափերը, սահմանվել են տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափերը, քննարկվել են համայնքային բազմաթիվ խնդիրներ, առաջարկվել են համապատասխան լուծումներ Կազմավորվել են ժամանակավոր և մշտական հանձնաժողով ներ, որոնք մշտական ակտիվ աշխատանքի մեջ են: Քննարկվել է համայնքի 2019թ. տարեկան բյուջեի առաջին երկրորդ և երրորդ եռամսյակների կատարման արդյունքները:Հաստատվել են համայնքային սեփականությա գույքի ցուցակները: Սահմանվել է արոտավայրի վարձավճարների դրույքաչափերը և բնակիչնե հետ կապվել են վարձակալության պայմանագրեր:
Որպես համայնքի ղեկավար կայացրել եմ որոշումներ մեծ թվով կարևոր խնդիրների լուծման

վերաբերյալ: Ըստ բնագավառների կազմավորել եմ սահմանված կարգով գործող և ժամանակավոր հանձնաժողովներ: Ընդունել եմ որոշումներ, որոնք բխում են համայնքի սոցիալ- տնտեսական շահերից:

Աշխատակազմի քարտուղարից մշտապես պահանջել եմ ժամանակին պատշաճ կերպով վարել համայնքապետարանի գասենյակային գործունեությունը, ներկայացնել պահանջվող փաստաթղթեր և տեղեկություններ, նախապատրաստել և կազմակերպել համայնքի անդամների ընդունելություններ: Կատարվել են աշխատանքներ, որոնք միտված են եղել առավել բարձրացնել համայնքի կառավարման արդյունավետությունը,ապահովել կատարվելիք աշխատանքների հրապարակայնությունը և համայնքապետարանի գործունեության թափանցիկությունը: